

ԻՆՉ-ՈՐ ՏԵՂ ԵՎ ՄԻ ՕՐ

Ինչ-որ տեղ եւ մի օր  
Մենութիւնս կորաւ  
Ուղիներով խոտոր  
Մեկ հյուսիս մեկ հարաւ  
Շրջեցի փնտրելով  
Փոխարենը գտա  
Հայցական մի շղթա  
Քաղաքի պատերին  
Իմ հասցեն փակցրի  
Աշխարհի թերթերին  
Բյուր ազդեր տվեցի  
Զուր կանչեր զուր հույսեր  
Փոխարենը քանզի  
Աստված ինձ տվեց սեր  
Տվեց ինձ որպեսզի  
Ինչ-որ տեղ եւ մի օր  
Կորցրի իմ սերը  
Փորձեցի ես բոլոր  
Բեմերում իմ դերը  
Զուների ոչ մի բառ  
Որ իմ վիշտը պատմեն  
Անանուն մի կերպար  
Անդիմակ ու անդեն

Նետեցի առ Աստված  
Որ դառնա կարեկից  
Իմ սիրտը նիզակված  
Իմ հասցեն սրտիս կից  
Զուր ջանքեր զուր հույսեր  
Փոխարենը քանզի  
Նա տվեց ինձ երգեր  
Նա տվեց որպեսզի  
Ինչ-որ տեղ եւ մի օր  
Իմ երգերը կորան  
Եվ այսպես գլխիկոր  
Կորուստի մի շարան  
Տանելով ինձ իր հետ  
Դարձրեց ինձ բացակա  
Գնացի դեպի ետ  
Ու ոչինչ չգտա  
Զկար երգ չկար սեր  
Եվ չկար մենություն  
Մնացի առանց դեր  
Սակայն ի գիտություն  
Ինչ-որ տեղ եւ մի օր  
Թե գտնեք մի ստվեր  
Անտերունչ ու մոլոր  
Համարել անվավեր

Somewhere and Someday

Somewhere and someday  
I lost my loneliness  
From south to north  
On winding roads  
I hunted everywhere for it  
But instead I found  
A chain of questions  
Useless things  
On the walls of the city  
I posted my address  
I placed announcements  
In every newspaper  
But calls were in vain  
Hopes were in vain  
Instead  
God granted me love  
Granted love so...  
Somewhere and someday  
I lost my love  
On every stage  
I tried to play my role  
But didn't have words  
To describe my brief  
A nameless character  
With no face and no masque

I flung to God  
My arrow-pierced heart  
Enclosed my address  
Imploring help  
But efforts were in vain  
Hopes were in vain  
Instead  
God granted me songs  
Granted songs so...  
Somewhere and someday  
Somewhere and someday  
My songs were lost  
A chain of losses  
Dragged me along  
Which I followed humbly  
And became wholly absent  
When I went back  
I found nothing  
There was neither song nor love  
Nor loneliness  
I was left without a role  
But be aware  
Someday and somewhere  
If you chance to happen upon  
A wandering shadow with no owner  
Leave it there  
It is void

ԹԵ ԿԱՐԾՈՒՄ ԵՍ

խոսք՝ Ռ. Քընոյի  
Փոխադր. Պերճ Թյուրաբյանի

Թե կարծում ես  
Թե կարծում ես  
Զահել աղջիկ  
Զահել աղջիկ  
Որ առընդմիջտ պիտի տեսի  
Ժամանակը քո սերերի  
Ասել կուզի  
Սխալվում ես  
Զահել աղջիկ ջահել աղջիկ  
Սխալվում ես  
Թե կարծում ես  
Թե կարծում ես  
Զահել աղջիկ  
Զահել աղջիկ  
Որ առընդմիջտ պիտի տեսի  
Վարդագույնը քո այտերի  
Զրահարսի քո ազդրերը  
Ու էմպե եղունգները  
Քնքուշ թեթեւ քո քայլերը  
Ասել կուզի  
Սխալվում ես

Անցնում են օրերը սիրուն  
Տոների օրերը սիրուն  
Պատվում են ու պտտվում  
Մոլորակներ ու արեւներ  
Իսկ դու փոքրիկ քայլում ես միշտ  
Շիտակ շիտակ անհոգ անվիշտ  
Միշտ դեպի այն ինչ չես տեսնում  
Մինչ քեզ ծածուկ են մոտենում  
Արագահաս կնճիռներ  
Ծանրակշիռ գիրություն  
Եվ եռածալ մի կզակ  
Դե ուրեմն  
Շուտ ուրեմն  
Զահել աղջիկ  
Զահել աղջիկ  
Քաղիր կյանքի ողջ վարդերը  
Եվ թող նրանց թերթիկները  
Երջանկության ծով լինեն քեզ  
Հավերժության ծով լինեն քեզ  
Թե չես քաղում այդ վարդերը  
Ասել կուզի  
Սխալվում ես

If You Imagine

Adapted from R. Queneau's  
"Si tu t'imagines"

If you imagine  
If you imagine  
Little sweetie  
Little sweetie  
It will last forever  
The season of your loves  
You're fooling yourself  
Little sweetie  
You're fooling yourself  
If you imagine  
If you imagine  
Little sweetie  
Little sweetie  
They will last forever  
Your rosy cheeks  
Your thighs of nymph  
Your enamel nails  
And your light foot  
You're fooling yourself  
You're fooling yourself

But you my little one you keep going  
Straight straight painless and careless  
Always toward what you don't see  
While very slowly draw near  
The swift wrinkles  
The weighty fat  
And triple chin  
So hurry up  
Hurry up  
Little sweetie  
Little sweetie  
Gather the roses of life  
And may their petals  
Be a sea of happiness  
Be a sea of eternity  
If you donut gather those roses  
You're fooling yourself  
You're fooling yourself

The lovely days disappear  
The lovely days of feasts  
Suns and planets  
Go round in circles

**ՀԱՐԱԼԵՉՆԵՐ**

Ինձ հարկ է գնալ  
Դեպի անցյալ  
Առասպելների աշխարհը  
Ինձ հարկ է գնալ  
Դեպի անցյալ  
Հարալեզների անտառը  
Ինձ հարկ է գտնել  
Հարալեզներ  
Հազար ու մեկ հեքիաթներ  
Ինձ հարկ է կերտել  
Սուտ երազներ  
Անհասանելի լուսիններ  
Ես բաց կթողնեմ հարալեզներ  
Իմ հին սերերի աշխարհում  
Ու ես կարծակեմ հարալեզներ  
Իմ արծազանքի ձորերում  
Ինձ հարկ է լինել  
Հին դիրքերում  
Պատերազմների դաշտերում  
Ինձ հարկ է վազել  
Քո կողքերում  
Քո փայտուստների քառուսում  
Ինձ հարկ է որսալ  
Հարալեզներ  
Հին անտառների խորքերում  
Ինձ հարկ է բանալ  
Հին գաղտնիքներ  
Առասպելական երկերում

Ես բաց կթողնեմ հարալեզներ  
Իմ հին վշտերի բանտերում  
Ու ես կարծակեմ հարալեզներ  
Իմ չալեկոծվող ծովերում  
Իմ հին սերերի աշխարհում  
Իմ հին վշտերի բանտերում  
Իմ արծազանքի ձորերում  
Իմ չալեկոծվող ծովերում  
Դու ես միայն  
Դու ես միայն  
Իսկ դու այսօր իմ գրկում  
Մի քիչ մեռնում ես ու դիակ ես  
Իսկ դու այսօր իմ գրքում  
Մի քիչ ներկա ու շատ անցյալ ես  
Քեզ հարկ է լիզեն ու լիզեն  
Հարալեզներ հարալեզներ  
Ինձ հարկ է գնալ  
Դեպի անցյալ  
Այնտեղ ուր կան առասպելներ  
Ինձ հարկ է գնալ  
Դեպի անցյալ  
Այնտեղ ուր կան հարալեզներ  
Հարալեզներ  
Հարալեզներ  
Հարալեզներ  
Հարալեզներ

**THE HARALEZ**

*I need to go back  
To the past  
The world of the Haralez  
I need to go back  
To the past  
The land of the Haralez  
I need to evoke  
The Haralez  
And thousands of fairy tales  
I need to engender  
Fake dreams  
Unreachable moons  
I will unleash the Haralez  
In the world of my old loves  
I will release the Haralez  
In the canyons of the echoes  
I need to remain  
On the old scenes  
Of the battlefields  
I need to follow at your heels  
Be in the chaos of your escapes  
I need to hunt  
The Haralez  
In the depths of forests  
I need to discover  
Old secrets  
In the realm of myths  
I will unleash the Haralez  
In the prisons of my old sorrows  
I will release the Haralez  
In my stagnant seas*

*In the world of my old loves  
In the prisons of my old sorrows  
In the canyons of my echoes  
In my stagnant seas  
There is nothing but you  
There is nothing but you  
But today in my arms  
You are almost dead almost a corpse  
And today in my book  
You are a little present and too absent  
The Haralez must lick you and lick  
The Haralez must lick you and lick  
I need to go back  
To the past  
The world where myths still live  
I need to go back  
To the past  
The world where the Haralez still live*

**\*Aralez or Haralez:**  
*the ancient Armenians believed in the existence of these dog-like creatures, which had the power to revive the fallen*

**ԵՐԳ ԵՐԳ ԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
ԿԱՍ ՓՈՔՐԻԿ**

Փոքրիկ եթե իմ կիթառը  
Քեզ այնքան էլ դուր չի գալիս  
Ես կպոկեմ սիրո լարը  
Եվ դուր կգամ ես քեզ ըստ իս  
Փոքրիկ եթե իմ այս ոճը  
Քեզ գերելու հնավանդ է  
Կխաղացնեմ ես իմ պոչը  
Քո սերն իմ մեջ մանավանդ է  
Դժբախտաբար իմ ես քո մեջ  
Չկա ոչինչ նույնիսկ մի «եւ»  
Օ պարզապես ճերմակ մի էջ  
Գուցե դառնար մի քիչ սեւ  
Փոքրիկ եթե այս պահվածքս  
Շատ է երկչոտ ու բռնազբոս  
Պատճառն այն է որ խոսվածքս  
Անբասիր է ու պերճախոս  
Փոքրիկ եթե դարպասումս  
Անճարակ է ծիծաղելի  
Չէ որ քո մեջ սողոսկումս  
Պետք է լինի անզգալի

Դժբախտաբար իմ ու քո մեջ  
Չկա ոչինչ նույնիսկ մի «ու»  
Օ պարզապես գրված մի էջ  
Դառնար մեկ երգ կամ երկու  
Փոքրիկ գիտես անիմաստ է  
Լարերն ու ոճերը փոխել  
Որ ես ծեր եմ դա հո փաստ է  
Եվ էլ ինչու դեռ խարդախել  
Եթե գրվեց արդեն երգս  
Քո սերն իմ մեջ ավելորդ է  
Մնաց մաքրել դիմաներկս  
Եվ այն ինչ որ իմ մեջ խորթ է  
Եվ քեզ ասել վերջիվերջո  
Թե երգս քեզ անմիտ թվաց  
Տողերի մեջ իմ չափածո  
Փոքրիկ քո հերն էլ անիծած  
Եվ քեզ ասել վերջիվերջո  
Փոքրիկ քո հերն էլ անիծած

**SONG ABOUT WRITING A  
SONG OR LITTLE GIRL**

*Little girl if you really  
Don't like my guitar  
I'll put off its love strings  
Perhaps then you'll like me  
Little girl if my style  
Of charming you is obsolete  
I'll clown around  
Your love for me is so urgent  
But alas between you and me  
There is nothing not even an "and"  
Only a blank white page  
I wish had blackened a little  
Little girl if my demeanor  
Is much too awkward and shy  
The reason is the way I speak-  
Too eloquent and silver-tonqued  
Little girl if my seduction  
Is ridiculous and clumsy  
The reason is that my intrusion  
Must be very crafty*

*But alas between you & me  
There is nothing not even an "&"  
Only a scribbled page  
Which could have been a song or two  
Little girl you know its meaningless  
To change styles and strings  
And that I'm old is certain  
There is no point in cheating  
If my song is already written  
Your love in me is needless  
Let me wash off my makeup  
And everything fake in me  
And let me tell you at last  
In my lines in verse  
If my song seemed silly to you  
Get lost little girl the hell with you*

## ՀՈՐԻԶՈՆԸ

Հորիզոնը վերջն է կյանքի  
Երկրագնդի ժամանակի  
Հորիզոնը կինն է վերջին  
Եվ սկիզբը ամեն ինչի  
Հորիզոնը վերջին կետն է  
Մեր օրերի կանգուն լույսը  
Հորիզոնը մեր աչքերն է  
Մեր աչքերի վերջին հույսը  
Ես գնում եմ ու կգնամ  
Հորիզոնի նվաճման  
Ես գնում եմ ու կգնամ  
Հորիզոնի ճանաչման  
Ես գիտեմ որ այնտեղ միայն  
Պիտի գտնեմ ակունքն իմ

Հորիզոնը կանչում է մեզ  
Երազներով տանջում է մեզ  
Հորիզոնը մարդն է վերջին  
Եվ սկիզբը ամեն ինչի  
Հորիզոնը վերջին սերն է  
Մեր առաջին առավոտը  
Հորիզոնը մոռացումն է  
Հին օրերի մեր կարոտը  
Ես գնում եմ ու կգնամ

Ես կգնամ ու կծուլվեմ  
Հորիզոնի թեւերին  
Հորիզոնը կգրավեմ  
Կդարձնեմ իմ գերին  
Ես գնում եմ ու կգնամ  
Դեպի ինձ իմ նվաճման  
Ես գնում եմ ու կգնամ  
Դեպի ինձ իմ ճանաչման

## The Horizon

The horizon is the end of life  
The end of the world and time  
The horizon is the last woman  
And the beginning of everything  
The horizon is the ending point  
The still light of our days  
The horizon is our sight  
The last hope in our eyes  
I am going toward the horizon  
To discover it  
I'll be going toward the horizon  
To conquer it  
I know that only there  
I shall find my source

The horizon invites  
And tortures with dreams  
The horizon is the last man  
And the beginning of everything  
The horizon is the last love  
And our first break of day  
The horizon is oblivion  
The longing for old days  
I am going toward the horizon...

I shall go and I shall merge  
With the horizon  
I shall go and I shall make  
The horizon my captive  
I am going toward myself  
To discover myself  
I'll be going toward myself  
To conquer myself

## ՔՈ ՁԵՌՔԵՐԸ

Գեթսեմանից մինչեւ կարմիր Գողգոթա  
Քո ձեռքերն են ձգվել դարձել իմ ուղին  
Գեթսեմանից մինչեւ անհաս Գողգոթա  
Քո ձեռքերն են տանում դրած իմ ուսին  
Գեթսեմանի պարտեզում քո ձեռքերն են ձիթենյաց  
Ջով ու թախծոտ ծառերի մեղմ ու կապույտ  
հովանին  
Աղոթքների գեշերում քո ձեռքերն են երկյուղած  
Սպասումի պահերով լցնում ժամերն իմ վերջին

Գեթսեմանից մինչեւ կարմիր Գողգոթա  
Քո ձեռքերն են մտրակելով ինձ տանում  
Գեթսեմանից մինչեւ անհաս Գողգոթա  
Քո ձեռքերն են իմ վերքերը դարմանում  
Գողգոթայի ճամփեքին քո ձեռքերն են ոսկեզօծ  
Փշեպսակ իմ գլխին դափնեպսակ իմ սրտին  
Չարչարանքի լեռներում քո ձեռքերն են երգ երգոց  
Իբրեւ եղեգն իմ ձեռքին ու դրոշակ իմ վշտին

Ինչքան արյուն ու քրտինք  
Ինչքան սեր ու նախատինք  
Ինչքան աղոթք առ երկինք  
Ինչքան անեծք առ երկինք

Գեթսեմանից մինչեւ կարմիր Գողգոթա  
Քո ձեռքերն են խաչելության պատկերը  
Գեթսեմանից մինչեւ անհաս Գողգոթա  
Քո ձեռքերն են իմ հարության պատկերը

## Your Hands

From Gethsemane to crimson Golgotha  
Your hands are stretched to become my path  
From Gethsemane to unreachable Golgotha  
I carry your hands upon my shoulders

In the Garden of Gethsemane your hands are  
The blue shadows of cool and sad olive trees  
In the night of prayer your hands are filling  
My final hours with fearful wake

From Gethsemane to crimson Golgotha  
Your hands are lashing me and pushing me ahead  
From Gethsemane to unreachable Golgotha  
Your hands are like a balm on my wounds

On the roads of Calvary your hands are  
A crown of thorns upon my head  
And a laurel crown on my heart  
On the Mount Golgotha your hands are the Song of Songs  
A reed in my hand a flag for my suffering

So much blood and sweat  
So much love and blame  
So much blasphemy towards heaven  
So many prayers towards heaven

From Gethsemane to crimson Golgotha  
Your hands are the vision of crucifixion  
From Gethsemane to unreachable Golgotha  
Your hands are the vision of resurrection

## ԽԱՂԸ

Մի աղջիկ բակում խաղում է գնդակ  
Իր բոլոր սիրած տղաների հետ  
Նա հերթով նրանց նետում է գնդակ  
Նրանք բարեխիղճ նետում են այն ետ  
Սակայն նրանց մեջ կա մի լուռ տղա  
Որն անտեսվում է խաղում մշտապես  
Նա վճռում է որ խաղից դուրս կգա  
Կթքի կերթա եւ ընդհանրապես

Աղջիկը նրան իբր չի տեսնում  
Գնդակ չի նետում  
Աղջիկը նրան այդպես է սիրում  
Այս խաղը երկար երկար է տևում  
Սակայն ոչինչ չի փոխվում  
Աղջիկը նրան այդպես է սիրում

Մի աղջիկ հետո դասի ժամանակ  
Հուշում է բոլոր տղաներին ծույլ  
Ուղարկում հերթով ծածկագիր նամակ  
Բառեր ու թվեր շնջում է թույլ  
Սակայն նրանց մեջ կա մի լուռ տղա  
Որ շատ է հոգնել դասերից պես-պես  
Մենակ ու անօգ որոշում է նա  
Դպրոցը թողնել եւ ընդհանրապես

Աղջիկը նրան իբր չի տեսնում  
Ոչինչ չի հուշում  
Աղջիկը նրան այդպես է սիրում  
Այս դասը երկար երկար է տևում  
Սակայն ոչինչ չի փոխվում  
Աղջիկը նրան այդպես է սիրում

Մի աղջիկ արդեն փողոցում մենակ  
Գերում է թովում տղաներին փուչ  
Տալիս է նրանց հույսեր անքանակ  
Շան պես պտտվում հաճում են իր շուրջ  
Սակայն նրանց մեջ կա մի լուռ տղա  
Մի անկյուն քաշված ապրում է անտես  
Գուցե բանաստեղծ մի օր նա դառնա  
Երաժիշտ երգիչ եւ ընդհանրապես

Աղջիկը նրան իբր չի տեսնում  
Հույսեր չի տալիս  
Աղջիկը նրան այդպես է սիրում  
Փողոցը երկար երկար է տևում  
Սակայն ոչինչ չի փոխվում  
Աղջիկը նրան այդպես է սիրում

Մի աղջիկ հիմա կյանքում միայնակ  
Չի խաղում գնդակ ու չի հուշում դաս  
Հույսեր չի տալիս չունի նշավակ  
Ունի լոկ երազ եւ հուշեր անմաս  
Սակայն նրանց մեջ կա մի լուռ զոջում  
Եվ իբր ապրած սիրո մի լուռ ծես  
Մի լուռ ափսոսանք մի լուռ մեղանջում  
Մի լուռ լռություն եւ ընդհանրապես

Աղջիկը իրեն իբր չի տեսնում  
Ու չի ափսոսում  
Աղջիկն ինքն իրեն այդպես է սիրում  
Այս կյանքը երկար երկար չի տևում  
Անշուշտ շատ բան է փոխվում  
Աղջիկը ինքն իրեն այդպես է սիրում

## THE GAME

*A little girl in the courtyard  
Is playing ball with her favorite friends  
She passes the ball in turn to everyone  
And everyone tosses it back carefully to her  
But among them there is a shy little boy  
Who is always ignored in this game  
He decides to leave the game  
Forget about them go away and etc.*

*The little girl pretends not to see him  
Doesn't toss the ball to him  
The little girl loves him in her own way  
This games goes on and on  
And nothing changes  
The little girl loves him in her own way*

*Then the little girl during class  
Whispers the answers to the lazy boys  
She passes the little notes in turn to everyone  
She whispers words and numbers  
But among them there is a shy little boy  
Helpless and fed up with all these classes  
He decides to drop out away and etc.*

*The little girl pretends not to see him  
Doesn't whisper anything to him  
The girl loves him in her own way  
The classes go on and on  
And nothing changes  
The little girl loves him in her own way*

*The little girl now in the street  
Attracts and seduces the idle guys  
Gives them hope endless hopes  
And they surround her like little pets  
But among them there is a shy little boy  
Who lives quietly hidden in his corner  
Perhaps one day he'll become a poet  
A songwriter a singer etc.*

*The little girl pretends not to see him  
Doesn't give him any hope  
The little girl loves him in her own way  
The street goes on and on  
And nothing changes  
The little girl loves him in her own way*

*Today the little girl alone in this life  
Doesn't play ball doesn't whisper the answers  
Doesn't give hope doesn't have an intent  
She has just dreams and souvenirs she can't  
display  
But among them there is a silent penance  
A silent guilt silent regrets  
A silent silence and etc.*

*The little girl pretends not to see herself  
And has no regrets  
The little girl loves him in her own way  
This life does go on and on  
And of course everything changes  
But the little girl loves herself in her own way*

**ՎԱՂՈՒՑ Ի ՎԵՐ**

Վաղուց ի վեր դարեր ի վեր  
Պտտվում են տարբեր իրեր  
Իրեր տափակ իրեր կլոր  
Իրեր անշունչ ու շնչավոր  
Պտտվում են միմյանց շուրջ  
Եվ պտտվում շատ աչալուրջ  
Որ չբախվեն հանկարծ իրար  
Չկործանեն աշխարհն արար  
Բայց ի վերջո ոմանք հոգնած  
Այս շուրջպարից համատարած  
Փորձում են քիչ իրար հպվել  
Վերուստ տրված ծիրից շեղվել  
Մոտենում են մեծ հույսերով  
Բախվում իրար մեծ աղմուկով  
Ու հեռանում արդեն առմիշտ  
Կորցնում են իրար ընդմիշտ  
Կորցրել ենք իրար ես դու  
Ճակատագիրն է սա մարդու  
Ճակատագիրը չմարդու  
Ճակատագիրն էս հաղթի դու

Վաղուց ի վեր դարեր ի վեր  
Խոյանում են տարբեր իրեր  
Իրար կողքի իրար սովոր  
Իրեր անշունչ ու շնչավոր  
Խոյանում են խիստ թեւանցուկ  
Մեկը մյուսին որպես նեցուկ  
Մեկը մյուսին եւ հայր եւ մայր  
Նույն անունով նման իրար  
Բայց ի վերջո ոմանք հոգնած  
Այս շքերթից համատարած

Խոյս են տալիս մեկուսանում  
Վերուստ տրված դերից պոծնում  
Եվ ապրելով այլ կյանք այլուր  
Վերապրում են անցյալը զուր  
Իրենց կյանքի ակունքներում  
Հանդիպում են իրար ներում  
Ջուր եք փախել եւ նա եւ դու  
Ճակատագիրն է սա մարդու  
Ճակատագիրը չմարդու  
Ճակատագիրն էս հաղթի դու

Վաղուց ի վեր դարեր ի վեր  
Պտտվում է երկիրը մեր  
Պտտվում է ու խոյանում  
Մեր շուրջ մեզ հետ ու ծերանում  
Եվ անընդհատ ծերանալով  
Չի մեռնում նա ոչ մի ձեռով  
Դեռ մենք գոնե ինչ-որ մի տեղ  
Դադար ունենք մի նստատեղ  
Եվ ի վերջո չի էլ կարող  
Կրկնել մեզ պես հայտնի մի տող  
Կանգնիր այստեղ ով երկրագունդ  
Ես իջնում եմ կանգնիր ծեր գունդ  
Նա իր դերը շարունակելով  
Մենք իրար շուրջ պտտվելով  
Խոյանալով միշտ ձեռք-ձեռքի  
Հորինում ենք վերջը երգի  
Մի քանի տող շատ ձեռնտու  
Ճակատագիրն է սա մարդու  
Ճակատագիրը չմարդու  
Ճակատագիրն էս հաղթի դու

**FOR AGES FOR CENTURIES**

*For ages for centuries  
Millions of things have been turning  
in circles  
Things that are flat things that are  
round  
Things that breathe and things that  
do not  
They circle around  
Alert and vigilant  
So as not to crash into each other  
And leave the world in ruins  
But after all a few of them  
Tired of this circle dance  
Attempt to deviate from their path  
To brush against one another  
They approach each other with great  
hopes  
But collide with a big fracas  
Vanishing once and for all  
They lose each other once and for all  
We lost each other you and I  
This is the fate of humankind  
This is the fate of any kind  
You cannot fight fate*

*For ages for centuries  
Millions of things have been rushing  
Side by side used to each other  
Things that breathe and things that  
do not  
They rush ahead arm in arm  
Like a crutch for each other  
Like mother and father  
Sharing one name and one face  
But after all a few of them  
Tired of this endless march  
Stray apart*

*Ridding themselves of their fated  
role  
Live in another place in another  
life  
But alas it's the same life  
They meet on their past path  
And forgive each other  
For their futile escapes  
This is the fate of humankind  
This is the fate of any kind  
You cannot fight fate*

*For ages for centuries  
This globe revolves  
Rushes and spins around us  
Growing old with us  
Though it grows older and older  
It doesn't die in any way  
We at least have a break  
And sometimes have a rest  
The globe after all spins and  
spins  
And cannot even say as we do  
"Stop here my friend  
I'm getting off"  
It keeps playing its role  
We keep rushing arm in arm  
To conceive the end of this song  
A very propitious refrain  
This is the fate of humankind  
This is the fate of any kind  
You cannot fight fate*

**ԻՆՉՔԱՆ ԻՆՉՔԱՆ ԵՆ ՉԵՂԵՑԻԿ**

Ինչքան ինչքան են Չեղեցիկ  
Մեր մանկություն օրերը որք  
Կածանները մեր դարձդարձիկ  
Հեքիաթները մեր անսփոփ  
Երբ շատ էր պարզ այս կյանքը  
բարդ  
Բայց մեր անհոգ օրերն ավաղ  
Տեսել են լոկ մի ակնթարթ  
Ու չեն թողել մեզ ոչ մի խաղ  
Թողել են մեզ մի անսկիզբ վերջ  
Մեր հայացքում թանձր մշուշ  
Ճերմակ դատարկ մի երկու էջ  
Ընդամենը մի երկու հուշ  
Բայց եւ այնպես որքան են թանկ  
Մեր խաղերը եղած-չեղած  
Մեր հեքիաթը սուտ ու սնանկ  
Մանկությունը մեր հորինած

Ինչքան ինչքան են Չեղեցիկ  
Մեր սերերը կիսատ-մերժված  
Մեր սերը մեծ բայց վաղանցիկ  
Եվ ամեն մի սիրո հարված  
Երբ սերը կար չենք ունեցել  
Ոչ մի կասկած ու տարակույս  
Բայց այնքան շուտ է հեռացել  
Ու չի թողել մեզ ոչ մի հույս

Թողել է մեզ մի կար-չկար  
Եվ մեր մաշկին բույրն իր ցնդող  
Երկու գունատ լուսանկար  
Ընդամենը մի երկու տող  
Բայց եւ այնպես որքան են թանկ  
Երազները մեր հորինած  
Մեր հուշերը սուտ ու սնանկ  
Մեր սերերը եղած-չեղած

Ինչքան ինչքան են Չեղեցիկ  
Փախուստները մեր կցկտուր  
Մեր խռովքը մեղամաղձիկ  
Մեր դեմ փակված ամեն մի դուռ  
Եվ ամեն նավ որ առանց մեզ  
Գնացել է ուրիշ ցամաք  
Իսկ մենք ափին իլու եւ հեզ  
Ճոճել ենք թաց մի թաշկինակ  
Վերադարձել ենք կրկին տուն  
Պարտված նետվել ենք անկողին  
Ու երազել քուն թե արթուն  
Փախուստերի մեր նոր ուղին  
Բայց եւ այնպես որքան են թանկ  
Փախուստները մեր հորինած  
Արկածները սուտ ու սնանկ  
Եվ մեր կյանքը եղած-չեղած

**HOW BEAUTIFUL THEY WERE**

*How beautiful they were  
The orphan days of our childhood  
Our wandering paths  
Our inconsolable fairy tales  
The time when this puzzling life was so  
simple  
But alas our carefree days  
Lasted for only the blink of an eye  
And took away our childhood games  
And left an end without the beginning  
A hazy fog in our sights  
A few blank white pages  
Just a few souvenirs*

*And yet how dear they are  
The games we never played  
Our hollow fairy tales  
The childhood we had  
And didn't have*

*How beautiful they were  
Our incomplete and rejected loves  
Our great but evanescent loves  
And even every painful blow of love  
The time when love was there  
And having no doubts  
We took it for granted  
But it passed so quickly  
And didn't leave us any hope  
Only words like "once upon a time"  
And its evaporated scent on our skin  
A few faded photographs  
Just a few short lines*

*And yet how dear they are  
Our made-up dreams  
Our hollow and deluded memories  
The loves we had  
And didn't have  
How beautiful they were  
Our hesitant escapes  
Our sentimental revolts  
Every door slammed before us  
And every ship which sailed  
Without us to lands  
While we sat docile on the dock  
Waved a wet handkerchief  
And then returned back home  
Defeated we fell to bed  
And awake or asleep  
Dreamt of new escapes*

*And yet how dear they are  
Our devised escapes  
Our hollow and untrue  
adventures  
The life we had  
And didn't have*

**ՔԱՆԻ ՂԵՌ ԿԱՍ**

Քանի ղեր կամ  
Անդունդների  
Եզրին կանգնած  
Իմ սեփական  
Մութ վիհերի  
Վրա թեքված  
Քանի ղեր կամ  
Կարծագանքեմ  
Քո անունը  
Ու կգոռամ  
Կարոտել եմ  
Քո արյունը  
  
Քանի ղեր կաս  
Բանտերը սեւ  
Պիտի դառնան  
Մի կոյտ ավազ  
Պատերը սեւ  
Կանհետանան  
Քանի ղեր կաս  
Կապրեմ համայն  
Վիշտը մարդկանց  
Հանկարծահաս  
Ու քմահաճ  
Մահը անսանձ  
  
Քանի ղեր կամ  
Քանի ղեր կաս  
Քանի ղեր կամ  
Քանի ղեր կաս  
Քանի ղեր կանք

Քանի ղեր կանք  
Արի մեկտեղ  
Անկումների  
Եզրին մնանք  
Ու ոչ մի տեղ  
Սխրանքների  
Էլ չգնանք  
Միաձուլվենք  
Ու մեկ ստվեր  
Միասին դառնանք  
Ու վերապրենք  
Չապրած հուշեր  
  
Ու թե մի օր  
Սայթաքումից  
Գահավիժենք  
Դեպի մութ ծոր  
Էլի նորից  
Կհանդիպենք  
Մենք իրարու  
Անցած կյանքի  
Մոռացման մեջ  
Մի հետմահու  
Եվ հրաշքի  
Որոնման մեջ  
  
Քանի ղեր կամ  
Քանի ղեր կաս  
Քանի ղեր կամ  
Քանի ղեր կաս  
Քանի ղեր կանք

**AS LONG AS I AM**

*As long as I am  
On the edge  
Of the precipice  
Bowed toward  
My very own  
Dark abyss  
As long as I am  
I will echo  
Your name  
And cry out  
That I miss  
Your blood  
  
As long as you are  
Every dungeon  
Will turn  
Into dust  
Ominous walls  
Will disappear  
As long as you are  
I will subdue  
Any pain any grief  
Even the sudden  
Whimsical  
Untamable death  
  
As long as I am  
As long as you are  
As long as I am  
As long as you are  
As long as we are*

*As long as we are  
Let us remain  
On the edge  
Of the fall  
Let us forget  
About new  
Adventures  
Let us meld together  
And share  
A single shadow  
And relive  
Unlived memories  
  
And if someday  
We stumble  
And fall  
Into the darkness  
We will find  
Each other  
Once more  
In the oblivion  
Of our past life  
In a posthumous  
And miraculous  
Quest  
  
As long as I am  
As long as you are  
As long as I am  
As long as you are  
As long as we are*

**ԱՐՉԱՆՆԵՐԸ**

Արձանները լցվում են  
Բազմանում են ամենուր  
Արձանները շարվում են  
Փողոցներում դռներդուռ  
  
Արձանները ծնվում են  
Ու շփանում մեզանից  
Արձանները փքվում են  
Իրենց պատշաճ դիրքերից  
  
Արձանները ծուլվել են  
Եվ հետմահու դասալիք  
Արձանները ծնուն են  
Միլիոնավոր արձանիկ  
  
Արձանները անցնում են  
Չարձանների քանակից  
Արձանները քշում են  
Անցորդներին ճանփեքից  
  
Արձանների դարն է սա  
Մեռածների դինաստիան  
Արձանների դարն է սա  
Անցորդների աքսորման...  
  
Արձանները կանգնում են  
Ներս ու դուրս ուր պատահի  
Արձանները հսկում են  
Քաղաքներում ամեհի  
  
Արձանները կռվում են  
Ու կոտորում քաղաքներ  
Արձանները արձանն են  
Բայց հռչակում օրենքներ  
  
Արձաններն իրարամերժ  
Կռվում են իրար ընդդեմ  
Արձանները գահավեժ  
Մուտք են գործում կրկին բեմ

Արձանները ցած ընկած  
Անգլուխ անոտ եւ անձեռ  
Արձանները մոխրացած  
Վերստին հառնում են վեր  
  
Արձանների դարն է սա  
Մեռածների դինաստիան  
Արձանների դարն է սա  
Անցորդների աքսորման...  
  
Արձանները հարբում են  
Օր ու գիշեր քարչ գալիս  
Արձանները ոռնում են  
Մարդկանց հանգիստ չեն տալիս  
  
Արձաններով են լցված  
Ամեն դահլիճ ու սրահ  
Արձաններն իբրեւ Աստված  
Ունեն շքեղ դամբարան  
  
Արձաններն հյուր են անկոչ  
Ներխուժում են ամեն տուն  
Արձանները մեզ անխոնջ  
Հսկում են քուն թե արթուն  
  
Արձանները լույսեր են  
Այգիներում ամայի  
Արձանները երկյուղն են  
Իրար սիրող զույքերի  
  
Արձանների դարն է սա  
Մեռածների դինաստիան  
Արձանների դարն է սա  
Անցորդներ աքսորման...

**THE STATUES**

*The statues abound  
Crowding everyplace  
Lining up in the streets  
From door to door  
  
The statues we give birth to them  
And then we spoil them  
The statues puff up  
On their secure pedestals  
  
The statues are fainéants  
And posthumous deserters  
The statues give birth  
To millions of statuettes  
  
The statues surpass  
The number of non-statues  
The statues drive away  
The pedestrians from the streets  
  
This is the era of statues  
The dynasty of the dead  
This is the era of statues  
And the exile of passersby  
  
The statues stand up  
Indoors outdoors anywhere  
The statues reign  
Over titanic cities  
  
The statues battle  
And destroy states  
The statues are statues  
But they ordain new rules*

*The statues rival  
Fight one another  
The statues dethroned  
Ascend the stage again  
  
The fallen statues  
Headless armless and legless  
Rise renewed  
From their ashes  
  
This is the era of statues  
The dynasty of the dead  
This is the era of statues  
And the exile of passersby  
  
The statues get drunk  
Hang around all day long  
The statues howl  
Donut give us a break  
  
The statues overflow  
All theaters and halls  
The statues like idols  
Have their own shrines  
  
The statues are intruders  
They invade every house  
The statues tirelessly  
Follow us day and night  
  
The statues are lanterns  
In dark public gardens  
The statues are the fear  
Of loving couples  
  
This is the era of statues*

**ԲԱՅԻ ՄԵԿԻՑ**

Այդ զինվորը  
Որի համար չեք աղոթում  
Որի համար չեք արտասվում  
Նա իր ուսին չէր շալակում  
Զրահ ու զենք  
Կրակ ու զենք  
Բայց փոխարենը  
Ուներ մի երգ սիրո մի երգ  
Մելամաղձուտ մի եղանակ  
Լացակունած մի ջութակ  
Սիրո գույնի մի դրոշակ  
Նա երգում էր ու նվագում  
Այդ անսովոր պատերազում  
Նա թռչում էր ու ծածանվում  
Անծայրածիր պատերազմում  
Ողջ ու մեռած լսում էին  
Նրա երգից ծնվում էին  
Բացի մեկից  
Բացի մեկից  
Բացի մեկից...

Այդ զինվորը  
Հազար անգամ գետին ընկավ  
Մեռավ մեռավ բայց չմեռավ  
Որ ջութակն իր չկորչի  
Որ երգն անվերջ  
Անվերջ հնչի  
Նա երգում էր  
Ողջ ու մեռած քառահատված  
Դիակների կողքին նստած  
Ու չէր գտնում այն աչքերը  
Զոհածված այն ձեռքերը  
Մայրամուտին երբ բոլորը  
Արդեն մեռան ինչպես օրը  
Մեռավ նաեւ մի վիրավոր  
Իբրեւ արդեն վերջին զինվոր  
Լռության մեջ երգը թաղվեց  
Ողջ աշխարհը գերեզմանվեց  
Բացի մեկից  
Բացի մեկից  
Բացի մեկից...

**ALL BUT ONE**

*The soldier  
For whom you do not pray  
For whom you do not weep  
Across whose shoulder is not slung  
Neither arms nor shield  
But instead  
A song a song of love  
A melancholy melody  
A lamenting violin  
And a flag the color of love  
He plays and sings  
In that unusual war  
He soars and circles  
In that infinite war  
Where the living and the dead  
Listening to his song rise once again  
All but one  
All but one  
All but one*

*The soldier  
Falls and falls a thousand times  
Dies and dies but doesn't die  
Lest he leave behind his violin  
And kill the echo of his song  
There sitting beside the mangled  
bodies  
Some dead and some still stirring  
He sings his song but never finds  
Those eyes imploring  
Those arms held out  
As twilight falls all are dead  
Like another day  
And dies one more wounded man  
As if the last the very last soldier  
The song is buried in the silence  
The whole world lies in the grave  
All but one  
All but one  
All but one*

**ԿՈՒՅՐԵՐԻ ՎԱԼՍԸ**

Կույրերի վալսը չի տարբերվում  
Մյուս վալսերից մյուս պարերից  
Չափն ու ձեւը չեն փոփոխվում  
Եվ քայլերը նույնն են նորից

Փոխվում է մի քիչ պարադաշտը  
Չկա փոքրիկ կամ էլ մեծ դաշտ  
Այլ կա կույրերի վալսի դաշտը  
Ուր պարում են ավելի հաշտ

Կույրերը զույգ առ զույգ  
Պտտվում են իրենց մարմինների շուրջը  
Կույրերը զույգ առ զույգ  
Խոստանում են պարել մինչեւ վերջին շունչը

Խոստանում են պարել հավերժ  
Նույն զույգերով շարժումներով  
Նույն ժպիտով եւ նույն սիրով

Կույրերի վալսը կանչում է մեզ  
Իր կախարդող շուրջպարի մեջ  
Եվ մենք կույրեր հլու եւ հեզ  
Հետեւում ենք իրար անվերջ

Կույրերի վալսը հնչում է միշտ  
Հնչում մեր մեջ հնչում չորս դի  
Առանց երգիչ ու երաժիշտ  
Դա գուցե մեր զարկն է սրտի

Զույգերը կույր առ կույր  
Պտտվում են իրենց մարմինների շուրջը

Զույգերը կույր առ կույր  
Խոստանում են պարել մինչեւ վերջին շունչը

Խոստանում են պարել հավերժ  
Նույն զույգերով շարժումներով  
Նույն ժպիտով եւ նույն սիրով

Կույրերի վալսը սիրո վալս է  
Երբ երգ չկա ու եղանակ  
Երբ լույսն է մարում շուրջդ մութ է  
Երբ ձեր սերը շատ է հստակ

Կույրերի վալսը դա մեր վալսն է  
Մեր աչքերի գառանցանքի  
Եթե մեր սերը մի քիչ շատ է  
Դա մեր վալսն է վալսը կյանքի

Կույրերը զույգ առ զույգ  
Հեռանում են իրենց հետ տանելով  
վալսը  
Կույրերը զույգ առ զույգ  
Երագում են նորից նորից սիրո վալսը

Երագում են հավերժ պարել  
Նույն զույգերով նույն քայլերով  
Նույն ժպիտով եւ նույն սիրով

Կույրերի վալսը սիրո վալս է  
Կույրերի վալսը դա մեր վալսն է  
Կույրերի վալսը սիրո վալս է  
Կույրերի վալսը հենց մեր վալսն է

## THE WALTZ OF THE BLIND

The waltz of the blind is no different  
Than other waltzes other dances  
Nor does the rhythm and style differ  
And the steps are the very same

Only the dance floor changes a little  
No matter if it is large or small  
It's just a floor for the waltz of the blind  
Where they dance in harmony

The blind couple by couple  
Are turning themselves around  
The blind couple by couple  
Promise to dance until they're out of breath  
They promise to dance forever  
Couple by couple with the same gestures  
The same smile the same love

The waltz of the blind invites us  
Into its enchanting circle dance  
And we blinded gentle and docile  
Follow each other forever

The waltz of the blind echoes forever  
Echoes inside us all around us  
With neither musicians nor singers  
Perhaps it's the pulse of our heart

The couples blindly blindly  
Are turning themselves around  
The couples blindly blindly  
Promise to dance until they're out of breath  
They promise to dance forever  
Couple by couple with the same gestures  
The same smile the same love

The waltz of the blind is the waltz of lovers  
When there is neither song nor music  
When lights turn out and darkness reigns  
And your love is crystal clear

The waltz of the blind is our waltz  
The waltz of our raving eyes  
If our love is overflowing  
This is our waltz the waltz of life

The blind couple by couple  
Are going away taking along the waltz  
The blind couple by couple  
Dream again and again the waltz of love  
They dream of dancing forever  
Couple by couple with the same steps  
The same smile the same love

The waltz of the blind is the waltz of love  
The waltz of the blind is our waltz  
The waltz of the blind is the waltz of love  
The waltz of the blind  
It is our waltz